

քրտնքի կաթիլներին: Պէտք է նկատել, որ իւրաքանչիւր երեխան իր աշխատանքի կաշի և այլն:

\* \* \*

Հեղինակը յօդուածը վերջացնելով՝ յիշում է գերմանական այն բոլոր դպրոցները, որոնց մէջ արդէն իրականացած են դպրոցական պարտէզները և աշակերտական ածուները:

## ԳՐԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

### ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽԱՂԵՐ

2.

#### ԵՐԳԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԽԱՂԵՐԻՅ

Բառերի եւ խօսքերի ազդեցութեան տակ յարադրութիւնը լինում է ճիշտ այնպէս, ինչպէս որ հիմնական երկեակների միանալուց քառեակներ են կազմուում: Մի խաղի մէջ եղած մի բառ կամ խօսք յիշեցնում է մի ուրիշ խաղի մէջ եղած նոյն կամ համանման բառը կամ խօսքը, ուստի և երկրորդ խաղը, երբեմն և երրորդը ևլն, առում է առաջին խաղի ետեից, և երկու, երեք և աւելի խաղեր միացած մնում են յիշողութեան մէջ և ապա երգուում թէ միասին և թէ անկախ:

Այս կերպով կազմուած մեծ երգերի տներն իմաստով իրարու աւելի են յարմարում քան դէպքի կամ անձի ազդեցութեան տակ միացածներինը: Սակայն սրանց մեծ մասն ևս արուեստի տեսակէտից անյաջող բաներ են. որովհետեւ անկախ խաղերի յարադրութիւնն այստեղ արտաքին է և հիմնուած չէ բովանդակութեան վրայ: Ուրիշ

բան է, եթէ բառերի հետ միասին և խաղերի իմաստն է իրար բռնում, կամ անկախ խաղերն իրար յարադրում են միայն նրա համար, որ իմաստով նման են իրար կամ որ և է ներքին առնչութիւն ունին իրար հետ։ Այս դէպքում երգերի կազմութիւնը հիմնուած է բովանդակութեան վրայ, ուստի և աները միասին կազմում են իմաստալից ամբողջութիւն։

Մեր ամենից յաջող ժողովրդական երգերը կազմուած են այս վերջին տեսակի յարադրութեամբ։ Խնդիրն այստեղ ի հարկէ անկախ խաղերից կազմուած մեծ երգերի մասին է և ոչ թէ այն մեծ երգերի մասին, որոնք մի անգամից իբրև ամբողջութիւն են կազմուած։

Տեսնենք այս երկու տեսակի յարադրութեամբ կազմուած երգերի օրինակներ։ Ամենից առաջ պիտի նկատել, որ այսպիսի երգերն ևս մեծ մասամբ աղճատուած են մեր ունեցած ժողովածուների մէջ, ինչպէս են առանձին առանձին վերցրած խաղերը։ Այդպիսի երգերի «բնագիրն» էլ պէտք է նախ վերականգնել, որպէս զի աների ներքին իմաստի կապակցութիւնը պարզ հասկանալի լինի։ Բայց դժբախտաբար մեր ժողովածուների սակաւութեան պատճառով այդ անելն այժմ անհնարին է։ Մենք կը բաւականանանք եղածով և մեր առձեռն ունեցածով։

Լոկ բառերի սրտճառով, առանց իմաստին ուշադրութիւն դարձնելու, յարադրութեամբ կազմուած մի երգ է, օրինակ, Վանայ Սաղ Ա. 45 «Կաքաւների երգ» վերնագրի տակ դրածը։ Այս երգն իբրև ամբողջութիւն է դրած, բայց ամբողջութիւնը լսկ արտաքին է «Կաքաւներ» ասելով հասկացում է «աղջիկներ», և հաւանորէն վարխանտի մէջ ևս «աղջիկներ» կը լինի, գաւառական ձևով «աղչըներ», որ, ինչպէս ուրիշ խաղերի մէջ, յանդ է կազմում «ջաղչըներ» բառի հետ։ Վանայ Սաղի մէջ յիշած երգի առաջին երկեակն է.

Կաքաւներ, կաքաւներ,

(Աղչըներ, աղչըներ)

Ելէք, ելթանք ջաղչներ,

Որովհետև այս սկզբի երկեակը, որ խկապէս կրկնակ է, վերջանում «ջաղաց» բառով, ահա ետևից գալիս են մի շարք երկեակներ նոյն բառով.

1. Ջաղցի առուն ջուր կը գէր,  
Աղջիկ լանուն գիւր կը գէր:
2. Ջաղցի առուն կանայ էր,  
Աղջիկ լանուն ճանայ էր:
3. Ջաղցի տանիքը փոս էր,  
Քար կը թալեմ՝ կը սոսէր:
4. Սեռիկը իլին հղ էր,  
Իմ եար թուխք աչք, թուխ բեղ էր,  
(Վար. Աղջիկ լանուն լայեղ էր):
5. Ջաղցի առուն աւազ էր,  
Աղջիկ լանուն գոււազ էր:
6. Իմ ծոցի կութինը թուջ էր,  
Իմ եարոջ երես պուճ էր:
7. Սարերն իլին ասեղ էր,  
Իմ եար նորախասեր էր:
8. Սարերն իլին ալաչ էր,  
Իմ եարն ալաչ կալաչ էր:
9. Դարի (վար. սարի) տակի պտտուն,  
Իմ եար քանց քոն խատուն:
10. Կաբւրներ, կտբւրներ,  
Շիլայ շապիկ ծալ արէք,  
Կարմիր երես խալ արէք,  
Չեք պտղ ձիկ հալալ արէք:
11. Բարձի տակէն հոտ կու գէր,  
Տեղ ձղեցի փոնթ կու գէր,  
Կաբւրներ, կաբւրներ, (աղւրներ, աղւրներ),  
Յէք երթանք ջաղցներ:

Այս երգի տները կապակցութեան համար պէտք է նկատել, որ 4-րդ երկեակն ունի և հետևեալ վարիանտը.

Սեռիկը իլին հղ էր,  
Աղջիկ լանուն լայեղ էր:

Հասկանալի է, որ սկզբնական յարադրութեան ժամանակ այս վարիանտն է կցուել միւսներին և յատկապէս «աղջիկ լաճուն» բառերի պատճառով, որ կայ միւս երկեակների մէջ ևս: Այս 4-րդ երկեակն այնուհետև իւր բառերով յիշեցրել է 7-րդը, որ ունի և հետևեալ վարիանտը.

Ճտիդ ուլունք ասեղ էր,  
Ջանս ջանիդ լայեղ էր:

10-րդ քառեակի համար ունինք հետևեալ վարիանտը, որի մէջ կայ կապող բառը, աղջիկ, ինչպէս և «կաքււրներ» հենց ասացինք պիտի լինի, «աղջըներ».

Աղջի, շիլէն ծալ էրս,  
Շիլէն ծալ ու մալ էրս,  
Էդ քո կարմիր թշներից  
Պագ մի սուր, հալալ էրս:

11-րդ երկեակն ունի հետևեալ քառեակը.

Տեղը գցեմ փոթ կը գայ,  
Աղջիկ լաճու մօտ կը գայ,  
Մեռնեմ էդ խոսս բըշամիդ,  
Միջէն անուշ հոտ կը գայ:

Այս վարիանտով կապակցող բառն է դարձեալ «Աղջիկ լաճուն», որ կայ նախորդ երկեակների մէջ:

Մեզ համար անհասկանալի մնում է միայն 6-րդ երկեակի յարադրութիւնը, որի վարիանտներ չունինք ձեռի տակ: Եթէ այս երկեակը մի կամ երկու երկեակ յետոյ եկած լինէր, այն ժամանակ ԵԱԸ բառով կը կապուէր.

Աւելորդ ենք համարում ասել, որ այս երգի երկեակներն ունին և քառեակներ՝ զարգացած ձևով. բերենք միայն 1-ին երկեակինը.

Ջաղցի դունէն ջուր կը գայ.

Աղբէր քրոջ հիւր կը գայ.

Աղջի ջան կանչան լսեմ,

Քանի սրտիս դիւր կը գայ:

Նոյնասկիզբ խաղերը բնականաբար շարունակ են ետեւէ ետեւ և կազմում մի ամբողջութիւն: Այդպիսի մի երգ գտնում ենք Վանայ Սաղ Ա. եր. 41. հետեւեալ կրկնակով.

Քո նազերով, քո խորոտիկ, դու վիբն ես,  
Աշխարհ գիտի, ալամ գիտի, դու իմն ես:

Իսկ յարագբուսած երկեակներն են.

Վարդն ի բացուե Վանայ քաղքի էգեսաար,  
Աստուած սիրես, մէկն ուղարկի ձիկը սար:

Վարդն ի բացուե առաւտըման խախուսոց,  
Իմ եար բախչէն կայնե երկու ձեռն ի ծոց:

Վարդն ի բացուե առաւտըման շազերով,  
Իմ եար բախչէն վարդ կը քաղի մաղերով:

Վարդն ի բացուե Վարդուերի կիրակին,  
Քո սէրն ինկէ մէջ իմ սրտի սրակին:

Այս երկեակներն սկզբնապէս իրարուց անկախ են: Վերջին երկեակն, օրինակ, մի ոտք աւելացած, գտնում ենք նոյն գրքի մէջ, եր. 54. մի ուրիշ երգի վերջում, որ կազմուած է նոյնպէս նոյնասկիզբ բառերով:

Մէկ ըստարի ծառեր ծաղկին Մաուարդարի կիրակին,  
Քո սէրն ինկէ մէջ իմ սրտի սրակին:

Այս միեւնոյն երկեակը գտնում ենք և Զաւախքի Բուրմունք. եր. 34. իբրև անկախ երկեակ վարդ բառով միացած մի ուրիշ երկեակի հետ:

Վարդ կը բացուի Վարդուերի կիրակին,  
Ես չեմ գիմանայ իմ եարիս կրակին.

Հալլը վարդ կը ժողվէ, ես հորտա մորտա,

Հալլը եար կը գանի, ես եարէս կարտա:

Նոյնասկիզբ բառերով յարագբուսած մի երգ է, օրինակ, և հետեւեալը՝ Վանայ Սաղ. Բ. եր. 53. «Հէյրանդ կէլնեմ, եար եար. Զանիդ զուրբան, իմ եար» կրկնակով.

Ուստի կուգաս չորտրալէն,

Աստուած պահի քո ջուխտ բալէն.

Չաքաթ մը տուր էդ քս մալէն,  
Չտրանջամ ես իմ հալէն:

Աւստի կուգաս ուշիկ ուշիկ,  
Ոտքերդ խթուի կակուղ փուշիկ.  
Կարմիր երես, պագն անուշիկ.  
Տուր որ կծեմ կակուղ թշիկ:

Աւստի կուգաս, էրեանայ,  
Աստուած քեզի դուռ մը բանայ.  
Պաշիկ մը տուր մարդ շիմանայ,  
Բօշ բան մի աներ քեզ մըհանայ:

Վերլուծենք հետեւեալ երգը, որ կայ Վանայ Սագ.  
Ա. 36.

1. Մտեր ես իգին, խաղող կը քաղես,  
Շամամ ծծուերով շաքար կը մաղես,  
Այմաստ խանչալով սրտիկս կը դաղես,  
Աչքով ունքուերով դու ձի կը մաշես:

2. Էլիք ես իգին, տուր ջուր կուգայ,  
Քաֆուր վարդ բացուի, անուշ հոտ կուգայ:

3. Իմ հէրանց իգին վարդ հազար թաւուր,  
Մէջ էն վարդերաց իմ վարդն ի քաֆուր.  
Շահ բլբլուն իջաւ վիւր իմ վարդին հիւր:

Այս երգը ըստ ինքեան մի սիրուն ամբողջութիւն է կազմում, միայն ազաւազուած: Նախ կրկնակը՝ «Արի, եար, արի, խռով մի մնայ. Աստըւորիս մալ ձի քե չի մնա» շատ չի յարմարում բուն երգին: Ապա երգը կազմուած է երեք խաղից, որոնց առաջինը մի աւելորդ շորրորդ տող էլ ունի, որ սկզբնապէս չկայ խաղի մէջ, ուստի և յանգն էլ թող է: Սկզբնական մի եռեակ գտնում ենք Համով Հոտով եր. 328, ուրիշ երգերի հետ խառն.

Էլիք ես իգին խաղող կը քաղես,  
Շամամ ծծերովդ շաքար կը մաղես,  
Աչքիդ խանչալով սրտիկս կը դաղես:

Այստեղ արդէն «մտեր ես իգին» ձևի փոխանակ ունինք «էլիք ես իգին»: Այս սկիզբը իրեն է քաշել 2-րդ

խաղը, որը սակայն նոյնպէս ազաւազուած պիտի լինի, քանի որ մի տող պակաս է և յանդէն էլ չի բռնում: Վարիանտը չունինք, որ ուղղենք: Այս 2-րդ խաղի վարդ բառն էլ իւր կողմից միացրել է իւր հետ 3-րդ խաղը, որ անկախ եռեակ է, և որի համար ունինք հետեւեալ վարիանտը.

Բազլա մ' եմ տնկել, վարդ հազար թաւուր,  
 Մէջ ըմեն վարդին իմ վարդն էր քաֆուր.  
 Շահ բլբուլն իջաւ վեր իմ վարդին հիւր:

Վանայ Սաղ Ա. 53. և Համով Հոտով եր. 322. գտնում ենք սովորական եօթն-վանկանի անկախ քառեակներէից կազմուած մի երգ, որ յարադրուած է բովանդակութեամբ: Ամբողջի մէջ նկարագրուած է տղայի յուսահատ հոգեկան վիճակը, երբ մերժում է ստանում աղջկանից: Տղան ասելով թէ հեռանում է, մի վերջին փորձ է անում դարձեալ համոզելու աղջկան:

Փակագծում առած տները չկան Սրուանձտեանի ժողովածուում:

Կ'երթամ, կ'երթամ, հեռանիմ.

Մն քիւ դարդէն (վարեանա՝ սիրոյն) մեռանիմ.

Իմ սիրածը կորուսի,

Հասա ես ինդո՞ր տնիմ:

(Ատլաա Ֆստան խառայով)

Մագերգ ի սիմ սրմայով,

Բոլոր գերդանիդ վրայ

Շարեմ անդին քարերով):

Սիմ սրմալի ալ փուչի,

Աղջիկ, սրտիկա կը մայի.

Մէկ տեսդ ի չեմ ի տայ

Հարիւր հազար զարուչի:

Աղջիկ, մագերգ հիւսէիր,

Կուենչիդ ուեհան քսէիր,

Սլլայիր վարդի ծառին

Բլբուլն պէս խօսէիր:

(Աղջիկ, աղջիկ, ալ աղջիկ,  
 Մագիրդ ի սրմայ աղջիկ,  
 Ունքերդ կալամբայ աղջիկ,  
 Իմ սիրուն սէր ջան աղջիկ):

Շալը գլխուդ կ'որորախ.  
 Հիալուս կանցնի սրտիս,  
 Ակար եսի չսիրես,  
 Աճէր ինչ մն'եղնայ հալիս:

Շրքաքէն ելեր կը հիայ,  
 Աչուրնները կը բլբլայ.  
 Երթամ քովը մօտենամ,  
 Կը վախնամ էլնայ գըժայ:

Աղջիկ, անունդ ի Թումայ,  
 Ծոցիդ երկու դումգումայ.  
 Եկո՛ ինձի խօսք մի տուր.  
 Քեզի պահէ սուրբ Թումայ:

Աւերորդ ենք համարում՝ ցոյց տալ թէ որտեղ կան  
 սրա անկախ քառեակները:

Վերեւում ասացինք, որ խաղերը յարագրուելիս յա-  
 ճախ վերամշակուում են միասին մի ամբողջութիւն կազմելու  
 համար: Այսպէս օրինակ Վանայ Սազ Ա. եր. 41. միացած  
 են երկու քառեակ, որոնց երկրորդի վերջին տողը դար-  
 ձած է. «էրուած մնաց քո կարօտէն», այսինքն սիրուց  
 փոխանակ իսկական ձևին «Եարն ի դարձե իւր կրարէն»,  
 որ գտնուում ենք նոյն գրքի մէջ եր. 62 և ուրիշ տեղեր:

Տնէն ելար կայնար ի դուռ,  
 Մէջքդ ի բարակ՝ խանչալի բուռ.  
 Քամին եզար, ետու շուռ մուռ,  
 Ես քո սիրուն սուգալ ու ծուռ:

(Պաղ) ջուր կուգէր վերին տարէն,  
 Կուգէր կաթէր մարմար քարէն,  
 Չխովցուցեր սրտիս եարէն,  
 Երուած մնաց քո կարօտէն:

Մեր ժողովածուների մէջ, ինչպէս անկախ քառեակ-  
 ներն իրար ետևից շարուում են անխտիր, այնպէս կից

տպագրուած են յաճախ երկու և աւելի ամբողջական երգեր, որոնք երբեմն չափով էլ իրարուց տարբերուած են: Այդպիսիները, որոնք ժողովրդի բերանին հէնց յարադրուած են, բնականաբար պիտի անջատել իրարուց: Վերջները երկու այդպիսի երգ:

Վանայ Սաղ Բ. 43. հայ հետեւեալն իբրև մի ամբողջ երգ դրած.

1. ՏՆԵՆ Ելար, կայնար տանիս,

Քեզ տեսնելու մաշա իմ միս.

Բոյդ նման ի գարնան կամիչ,

Ասի կտրեմ, չելայ կիմիչ:

ՏՆԵՆ Ելար, հաց կը տանես,

Ազար լածուն աչքով կանես.

Որ մօտենայ՝ աղբէր կտեսս,

Որ զատանայ՝ սիրով մաշես:

2. Մեր տուն մօտիկ, ձեր տուն մօտիկ,

Յրթանք քաղենք որթկուն խոտիկ.

Իմ հար քանց քօն շատ խորտաիկ,

Եարող մեռնիմ, անուն վարդիկ:

Վարդիկ սիրուն ի վարդի նման,

Բլբլունք վերէն հայրան էրան.

Վարդ որ պակէր ծաղիկ կը տար,

Վարդիկիս հօար մէջէն կուտար (կուգար):

3. Դաւի տըկլն մութ կուգեք,

Աղջիկ լածուն հիւր կուգեք.

Սիրած սիրածին դիւր կուգեք.

Եարող աչից ջուր կուգէք:

Բարձ վերուցեմ հօա կուգայ,

Կարմիր խնձոր դիւր կուգայ:

Խնձոր կիսից կըծած էր,

Չորս բոլորն արծըթած էր:

Խնձոր հարող առած էր,

Եարող ծառից պրծած էր:

Ասի տապկեմ կէս անեմ,

Չըկիմիչայ որ ուտեմ:

Այս՝ իբրև մի ամբողջութիւն դրած երգը իսկապէս երեքն է: Առաջին երգը երկու անից է, որոնք իրար յարադրուել են «անէն ելար» սկսուածքով:

Երկրորդ երգը, որ մի առանձին ամբողջութիւն ունի ըստ բովանդակութեան, դարձեալ երկու խաղից է կազմուած, և առաջին երգի հետ կցուել է միայն տուն բառով: Երկրորդ երգի առաջին խաղն իբրև անկախ քառեակ ունի և հետեւեալ ձևը. Քնար Հայկ. 177.

Մեր տուն, ձեր տուն մօտիկ մօտիկ,

Գու կապել ես կարմիր դօտիկ,

Երթանք քաղենք կանաչ (վար. հորթկան) խոտիկ,

Տեսնենք վիր եարն է խորոտիկ:

Երգիչն այս քառեակի 2-րդ տողը դուրս է ձգել, 4-րդը դարձրել՝ «Իմ եար քանց քնն շատ խորոտիկ», և ապա աւելացրել է մի նոր տող իբրև 4-րդ՝ «Եարոջս մեռնեմ անուն Վարդիկ»: Այս ներքին փոփոխութիւնն անհրաժեշտ է եղել երգի յաջորդ տունը յարադրելու համար, որ սկսուում է «Վարդիկ սիրուն ի վարդի նման» տողով:

Երրորդ երգը նոյն իսկ 7-վանկանի չափով էլ տարբերում է 8-վանկանի նախորդներից: Ըստ երևութին չի հասկացուում թէ ինչն է այս բոլորովին անկապ երգերի մէջ իբրև կապ մտածուել: Բայց եթէ վերականգնենք նախորդ երգի վերջին տողի բնագիրը, այդ մեզ հասկանալի կը լինի: Այդ վերջին տողն է. «Վարդիկիս հօտը մէջէն կուտար», որ աղճատուած է: Հոսը բառը պիտի լինի հոս, այսինքն մի վանկ պակաս, ինչպէս պահանջում է ստանաւորի չափը: Ապա այս տողի վերջին բառը կուսար նոյնպէս աղճատուած է, որովհետև յանգ չի կազմում նախորդ տողի հետ, որ նոյնպէս կրսար բառով է վերջանում: Շատ պարզ է, որ վերջին տողի կուսար բառի տեղ պիտի լինի կուգար. ուրեմն ամբողջ տողը. «Վարդիկիս հօտ մէջէն կուգար»: Երգն այս ձևով արդէն կարող էր իւր հետ միացնել յաջորդ երգը, որ նոյնպէս կուգէր = կուգար բառով է վերջանում:

Երրորդ երգն ըստ երևութին իմաստալից կապակցութիւն չէ. բայց կարծում ենք միայն այն պատճառով, որ աղճատուած է: Այդ երգի 12 տողը ժողովոյը դրած է իբրև երեք քառեակ. բայց այդ ճիշտ չէ: Երգն իսկապէս կաղմուած է չորս քառեակից, միայն 2-րդ և 4-րդ քառեակները թերի են մնացել: Դնենք այդ քառեակների տեղ մեզ ծանօթ վարիանտները, որոնք գուցէ և շատ յաջող չեն, և կը տեսնենք, որ երգն աւելի իմաստալից է դառնում:

Բարձր սարէն ջուր կը գայ,

Աղբէր քրոջ հիւր կը գայ,

Ի՞նչ անեն հէրն ու մէրը,—

Աղջիկ աղին դիւր կը գայ:

Տեղ եմ քցել փոթ կը գայ,

Նար եարի մօտ կը գայ.

Կարմիր խնձոր բարձի տակ,

Միջէն անուշ հոտ կը գայ:

Կարմիր խնձոր կծած ա,

Չորս բողորն արծաթած ա,

Աղբէրս ուզեց շտուի.

Ասի՛ եարի դրկած ա:

Ասի՛ տապկեմ կէս անեմ,

Ձի կիմիշայ որ ուտեմ . . .

Մեր ժողովածուի մէջ վերջին երկեակի համապատասխան քառեակ չունինք. հաւանորէն դա նախորդ քառեակի ածումն է: Մեր ժողովածուի մէջ կան վերևում դրած քառեակների համար մանր տարբերութիւններ ևս, որոնցից այս կամ այն գուցէ աւելի իմաստալից դարձնէին երգը. բայց բերածից էլ արդէն երևում է այս խաղերի իմաստալից կապակցութիւնը, երգի բովանդակութիւնը վերլուծել չենք ուզում, միայն այսքանը նկատենք, որ երգի ամբողջութիւնը հասկանալու համար՝ առաջ պէտք է քառեակների իմաստը լաւ բմբռնել:

Վերցնենք մի երգ ևս Քնար Մշեց, և վան. եր. 31.

1. Էսօր ուրբաթ է, պաս է:

Սրտիկ արծաթի թաս է.

Սրտիկ մալուլ մի մնա,

Աշխարհք մարդի չի մնա:

Սրտիկ սինի սնդուկ էր.

Կտորաւ էն գինի սնդուկ.

Թռաւ էն կարիք ճնճղուկ.

Թռաւ բանձրիկ սար կլաւ:

2. Տ'եղևեմ բանձրիկ սարեռաց,

Հողիւ ուշաթափ անեմ.

Կոպալ իր ձեռքէն առնեմ

Թալեմ քիրէն էրիցեմ:

Մոխիրդ ի տամ ոսկերչուն,

Մախչայ շինէ իմ ճակատուն.

Մտանիք շինէ իմ մատուն.

Կուպչայ շինէ իմ ձեռքուն.

Քամար շինէ իմ մէջքուն.

Գուրպաղ շինէ իմ ստուն:

3. Աղբէր, դու արի, գնա,

Շապիկ քո հան ու գնա.

Մոխրաջրով լուանամ,

Թափ տամ, վեր կուին փռեմ:

Եարիկ, դու արի, գնա,

Շապիկ քո հան ու գնա.

Սապոնջրով լուանամ,

Թափ տամ, վեր ծառին փռեմ:

Այս բոլորը ժողովողը գրեւ է իբրև մի ամբողջութիւն  
ՏԻՔՏԷ գէնգ զընգ, գէՏԷ ջանս կրկնակի հետա Բայց դա  
Իսկապէս երեք երգ է:

Առաջին երգի առաջին երկու տողը հետևեալ քա-  
ռեակի հիմնական երկետակն է.

Էս օր ուրբաթ է, պաս է,

Սրտիկ արծաթէ թաս է.

Հողիդ դատի, վարդապետ.

Ինչի ասիր չհաս է:

Իսկ երկրորդ երկու տողն իսկապէս մի կրկնակ է, որ ursիկ բառի պատճառով միացել է առաջին երկեակին: Առաջին երգի երկրորդ տունն առանձին անկախ քառեակ է, որի մի վարիանտը գտնում ենք Վանայ Սազ Ա. 64. կցուած ուրիշ քառեակներին հետ.

Քս ծոց ձիկ սալուի սնդուկ.

Ես էլնի կարիք ճնճուկ.

Որ կտարէր էն սալուի սնդուկ,

Թռնէր էն կարիք ճնճուկ:

Այս քառեակը ursիկ բառով միացած է նախորդին և երկուսը միասին կազմում են մի ամբողջական սիրուն երգ: Նախ նկարագրուում է մի վշտահար անարատ սիրտ, որ ինքն իրեն մխիթարել է ուզում աշխարհի ունայնութեամբ: Բայց իսկոյն երկրորդ տան մէջ նա ընկնում է անմխիթար յուետեսութեան մէջ. երգիչը յիշում է ժողովրդական հաւատալիքը թէ մարդուս սիրտը մի սնդուկ է, որի մէջ մնում է հոգին իբրև պանդուխտ ճնճուկ. մեռնելիս սնդուկը կտարուում և այդ ճնճուկ հոգին դուրս է թռչում ծառերն ու սարերը: Արդ երգչի սրտի սնդուկը կտարուել է ու հոգին թռել է բանձրիկ սարն ելել: Ուրեմն նա մեռած մարդ է, այլ ևս մխիթարութեան յոյս չունի: Որքան դառն բանաստեղծութիւն:

Երկրորդ երգը մանկական է:

Իսկ երրորդ երգը սիրուն կերպով յարագրուած երկու անկախ քառեակ է: Դրանցից էականն է երկրորդ քառեակը, առաջինը նրա զարգացումն է. երկրորդի վարիանտը գտնում ենք իբրև անկախ խաղ Աղգաբբ. Հանդէս. Դ. գիրք 1898. եր. 168.

Ա՛յ տղայ, արի՛, դնա՛.

Շապիկդ տուր ու գնա՛.

Լուսմ, լուսմ, չիստկու՛ի,

Վարդաջրեմ՛, խտկու՛ի:

Նոյնը գտնում ենք Վանայ Սազ Ա. եր. 43. անկապ կերպով միացած ուրիշ խաղերին հետ.

Շալէ շապիկդ հան, գնան,  
 Ինչ ջրով լուամ՝ չիտակուի,  
 Վարդի ջրով կիտակուի,  
 Փալ տամ, ծոցիս փռեմ,  
 Փոշին թալեմ, նոր փռեմ:

Նոյնը և կայ և Համով Հոտով եր. 310, միացած ուրիշ խաղերի հետ.

Նկար ու անցար, դիշեր չմնացիր,  
 Շալդ ու շապիկդ թողիր գնացիր.  
 Լուամ, լուամ, չիտարկի.  
 Բերնիս փուքով փոշին հանեմ,  
 Շուռ ասամ ու ծալ ծալ անեմ:

Նոյնը դանում ենք դարձեալ Զաւարի Բարձունք եր. 20, ուրիշ երգերի հետ միացած.

Մօ մանչ, սո՛ւր չուխող լուամ,  
 Լուամ, լուամ, չիտարկի,  
 Վարդի ջրով իտարկի.  
 Լուամ ու քարին ձգեմ,  
 Թափ տամ ու ծառին ձգեմ,  
 Փալեմ ու ծոցս դնեմ:

(Կը շարունակուի)

Մ. Ս. Բեդեան.

### ԱՆՅԵԱԼ ԴԱՐԵՐԻ ՅԻՇԱՏԱԿ,

1888—91 թ փոխանորդ էի Կարսի վիճակում: Պաշտօնիս պարտաւորութեամբ վիճակն այցելելիս՝ բնականաբար պէտք է հետաքրքրուէի հնութիւններով էլ: Ընդարձակ տեղեկազերք թողնելով ուրիշ անգամն՝ այժմ կարեւոր եմ համարում Հ. Ալիշանի «Շիրահում» չհրատարակուած մի քանի արձանագրերը հրատարակել:

Ա. ՏԱՅԼԱՐԻ ՎԱՆՔ.

Տայլարի արեւմտեան դրան և լուսամտի վերև մի բարձրաքանդակ կայ, որ պատկերացնում է միմեանց հանդէպ վաղող երկու առիւծներ, որոնք կամենում են փողոտել երկու եղնիկ: Այդ քանդակի վերև եղծուած տառերով կայ մի անվերջամեծ